Հայկական պատմամշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման ադրբեջանական քաղաքականությունը բռնազավթած Արցախում շարունակում է երկրաչափական պրոգրեսիայով աճել: Ադրբեջանական իշխանությունները անընդհատ կեղծել են իրականությունը և էթնիկ բնաջնջման իրենց քաղաքականությունն են առաջ տարել:

Ադրբեջանական տարածքային ամբողջականությունը որևէ առնչություն չունի Արցախի հետ և չի էլ ունեցել: Սա է հիմնարար գաղափարը և իրականությունը: Չնայած սրան՝ ադրբեջանական իշխանությունները անընդհատ են կեղծել իրականությունը և էթնիկ բնաջնջման իրենց քաղաքականությունն են առաջ տարել: *Նույն քաղաքականության արդյունք էին ադրբեջանական սանձազերծած 2016թ. ապրիլյան ու 2020թ. 44-օրյա, 2021 և 2023թ -ի պատերազմները:*

Արդեն մի քանի տարի է՝ Ադրբեջանը կոպտորեն խախտում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը. պարբերաբար հրահրում է ռազմական բախումներ՝ ոտնահարելով միջազգային իրավունքի նորմերը: *Այս պահին կա Հայաստանի տարածք ադրբեջանական զինված ոչ թե 3, այլ 4 ներխուժում՝*

1. *Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղ 2022թ. մարտ:*
2. *Սյունիքի մարզի Գորիս համայնք (Սև լճի տարածք՝ Ակներ ու Վերիշեն գյուղերի հարևանությամբ) - 2021թ. մայիս:*
3. *Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք (Կութ, Վերին Շորժա և մի շարք այլ գյուղեր) - 2021թ. մայիս:*
4. *Սյունիքի մարզի Ծավ գյուղին հարող սահմանային հատված - 2020թ. հոկտեմբեր*

Այս ամենին զուգահեռ, ադրբեջանական իշխանությունները բարձրագույն մակարդակով շարունակում են ատելության, թշնամանքի քարոզի քաղաքականությունը և իրենց ներկայությամբ, ու ադրբեջանական զինված ծառայողները անհնարինության են վերածել մեր սահմանային բնակիչների բնականոն կյանքը:

Այդ իսկ պատճառով կոչով դիմում ենք միջազգային հանրությանը, ներառյալ ՄԱԿ-ի մասնագիտացված մարմիններին, Եվրոպայի խորհրդին, ԵԱՀԿ-ին, Եվրոպական հանձնաժողովին, ինչպես նաև առանձին պետություններին՝ դատապարտելու Ադրբեջանի վարած ագրեսիվ քաղաքականությունը: Զորքերը հետ քաշելու, հրադադարի ռեժիմը վերականգնելու և լարվածությունը թուլացնելու կոչերը, որոնք ուղղված են «երկու կողմերին», տեղին չեն և չեն արտացոլում առկա իրավիճակը:

*Սույնով միջազգային հանրությանը կոչ ենք անում.*

- Հանրայնորեն և հրատապ դատապարտել Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող ագրեսիվ քաղաքականությունը, Հայաստանի տարածքային ամբողջականության բացահայտ ոտնահարումը
- Շարունակել հանրայնորեն և խստորեն պահանջել Ադրբեջանից Հայաստանին վերադարձնել բոլոր ռազմագերիներին,
- Եթե այս ագրեսիվ գործողությունները շարունակվեն, ապա դիտարկել և առաջ քաշել նպատակաուղղված պատժամիջոցներ կիրառելու հարցը, որոնք կդադարեցնեն Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը:




Դատապարտել հայկական կրոնական, մշակութային և պատմական վայրերի և հուշարձանների դիտավորյալ ոչնչացումը, վնասումը, յուրացումը, պղծումը, պահանջել հետաքննել և պատժել Ադրբեջանի կողմից վանդալիզմի դեպքերը Կոչ անել Ադրբեջանին անհապաղ դադարեցնել մշակութային ժառանգության հուշարձանների վրա հարձակումները և պահանջել ճանաչել, հարգել և պաշտպանել Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող մշակութային ժառանգության բոլոր հուշարձանները՝ համաձայն միջազգային կոնվենցիաների:

Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA) հրապարակել է հայկական հուշարձանների վիճակը ներկայացնող լուսանկարներ՝ ինչ են արել ադրբեջանցիներն Արցախն օկուպացնելուց, հայերին բռնի տեղահանելուց հետո: Բացահայտ վանդալիզմ, քրիստոնեության, հայ մշակույթի նկատմամբ ատելություն ու թշնամանք: Ու ադրբեջանցի բարբարոսները, բնական է, որ պետք է խանգարեն ՅՈՒՆԵՍԿՕ-ին շրջայց կատարել օկուպացված Արցախում:

Չնայած, որ պարտվել ենք պատերազմում, բայց մեր միանական նպատակի համար պետք է օգտագործենք Հայաստանի, արցախահայության և Սփյուռքի հավաքական ուժն ու նվիրական լույսի պես պահենք մեր պետականությունը՝ մեր իրավունքների գլխավոր երաշխավորին:

The Azerbaijani policy of appropriation and destruction of the Armenian historical and cultural heritage in occupied Artsakh continues to grow exponentially. The Azerbaijani authorities has constantly falsified reality and promoted their policy of ethnic extermination. The Azerbaijani territorial integrity has nothing to do with Artsakh and has never had.This id this the fundamental idea and reality. Despite this, the Azerbaijani authorities constantly falsified reality and promoted their policy of ethnic extermination. The results of the same policy were the wars unleashed by Azerbaijan in April 2016, 44-day war in 2020, 2021 and 2023 wars. For several months now, Azerbaijan has been grossly violating the territorial integrity of the Republic of Armenia. regularly provokes military clashes, violating the norms of international law.

At the moment, there are 4, not 3 incursions of Azerbaijani armed servicemen into the territory of Armenia: 1. Nerkin Hand village of Syunik Province-2022. March. 2. Vardenis community of Gegharkunik Province (Kut, Verin Shorzha և a number of other villages) - 2021 May. 3. Goris community of Syunik Province (Black Lake area; near Akner and Verishen villages) - 2021 May. 4. Border area near Tsav village of Syunik Province - 2020 October. I ask everyone not to ignore the invasion of the



village of Tsav, to take this into account in all actions. Along with this, the Azerbaijani authorities continue their policy of Armenophobia; their policy hatred and enmity at the highest level and Azerbaijani armed servicemen made the normal lives of our border residents impossible through their presence and criminal acts.

For this reason, we appeal to the international community, including specialized UN bodies, the Council of Europe, the OSCE, the European Commission, as well as to individual states to condemn Azerbaijan's aggressive policy. Calls for the withdrawal of troops, the restoration of the ceasefire and the reduction of tension addressed to "both sides" are inappropriate and do not reflect the current situation:

We hereby call on the international community:

– To publicly and urgently condemn the aggressive policy pursued by Azerbaijan towards Armenia, the open violation of the territorial integrity of Armenia




To continue to publicly and resolutely demand that Azerbaijan return all prisoners of war to Armenia, – Condemn the deliberate destruction, damage, appropriation, desecration of Armenian religious, cultural and historical sites and monuments, demand investigation and punishment of cases of vandalism by Azerbaijan.

Call on Azerbaijan to immediately stop attacks on cultural heritage sites and demand recognition, respect and protection of all cultural heritage sites under the control of Azerbaijan, in accordance with international conventions. The Armenian National Committee of America (ANCA) has published photographs reflecting the condition of Armenian monuments, which the Azerbaijanis did after the occupation of Artsakh and the forced displacement of Armenians. Outright vandalism, hatred and hostility towards Christianity and Armenian culture. And the Azerbaijani Barbarians, of course, that they should prevent UNESCO from making a tour of occupied Artsakh. Despite the fact that we lost the war, we must use the collective strength of Armenia, the Armenians of Artsakh and the Diaspora for our common goal and preserve our statehood as a cherished light, as the main guarantor of our rights.




***Ղեկավարներ՝*** *Ռուզաննա Խաչատրյան*
*Օլյա Ղուլյան*
*Թագուհի Գրիգորյան*

***Աշակերտներ՝***

Արման Արզումանյան 7-րդ «Ա»
Գալուստ Ալավերդյան 7-րդ «Ա»
Լիա Բակունց 7-րդ «Ա»
Մանուշակ Ղասումյան 7-րդ «Ա»
Դավիթ Հովսեփյան 7-րդ «Ա»
Մանե Ավագյան 7-րդ «Ա»
Գոռ Մուսայելյան 7-րդ «Ա»
Ալեքս Միկա Ավանեսյան 7-րդ «Գ»

**ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ**
**ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ**
**www.goris3school.am**

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

# ԵՐԲ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

*Հայ-ադրբեջանական հարաբերություններ*




*ԳՈՐԻՍ 2024թ.*